ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱԲԵՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

«Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի դուռ», Կ. Պոլիս, 1874, եւ «Դաւիթ եւ Մհեր». Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-դիւցազնական հին վէպ։

ԺԴ.

Ամեն դիւցազնական արարք պակուում է արժանաւոր ամուսնութեամբ, որ դիւցազների վարձատրութիւնն է։ Մեր հէքիաթների մէջ հերոսները հեռու աշխարհներ են մտնում գալիս, աշխարհքի լայնքն ու երկայնքը չափում, դև ու վիշապի հետ կռւում, զանազան կորճութիւն և հանճարեղութիւն ցոյց տալիս, բայց վերջ ի վերջոյ նրանք գալիս մի կէտի վերայ հանգչում են.—դա հաւանած և արժանի ու գեղեցիկ աղջկայ հետ ամուսնութիւնն է։ Դաւիթն արդէն հռչակաւոր դիւցազն է. նրան ևս պէտք է կեանքի ընկեր, որ, հարկաւ, չէ կարող մի հասարակ աղջիկ լինել. դիւցազնին պէտք է դիւցազնուհի կին։ Այդպիսի կանայք երկուսը կան վէպի մէջ՝ Զմշկիկ-Սուլթան (տիրուհի) և Խանգութ խաթուն (տիկին, բամբիշ), բացի դրանցից և Գոհար խաթուն Մհերի վէպի մէջ (թողնում ենք երկրորդական դեր խաղացող կանայքը)։

Ժողովրդական վէպի դիւցազնական կանանց տիպերը որոշւում են իրանց մեծավայելուչ բնաւորութեամբ. նրանք, ինչպէս դիւցազները, քաջամարտիկ են, քաջավարժ են զինաշարժութեան և ձիավարութեան մէջ։ Շատ անգամ նրանք հանդիսանում՝ են իրրև ազատ տիրուհիներ մի գաւառի կամ մի քաղաքի և ձիու վերայ նստած, զինաւորուած շրջում են իրանց երկրի սահմանն ու սահմանից

[1] Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. № 10, 11 և 1890 թ. № 1

դուրս, կռւում են թէ դիւցազնների և թէ այլ հրէշների դէմ, և դաշտի մէջ զարնում են իրանց վրանները, կամ չինած ունին իրանց ապարանքները (քօշկ ու սարայները), որոնց մէջ հանգստանում են պատերազմական սխրագործութիւններից, և այդտեղ, շրջապատող բուրաւէտ պարտէզների օդով արբեցած, անձուկ են քաշում իրանց արժանի դիւցազնի սիրու կարօտով։ Երբեմն նրանք գեղեցիկ են ինչպէս հրեղէն աղջիկները, և իրանք ևս հրեղէն, այսինքն գերբնական էակ են, քնքուշ և հրապուրիչ. բայց իրանց կուսական հպարտութեան մէջ իրանց համար այր են ճանաչում միայն նրան, որ իրանց յաղթում է մենամարտութեան մէջ և իրանցից ուժով վերազանց է լինում, իսկ իրանցից թոյլերին արհամարհելով արհամարհում են և շատ անգամ նոյն իսկ անխնայ կոտորում են այդպիսիներին։ Մեծ մասամբ նրանք հաւատարիմ են ամուսնական սիրուն և պատրաստ են իրանց այրերի համար զոհել ամենայն բան և նոյն իսկ իրանց կեանքն ևս զոհում են նրանց։ Իրանց ամուսնական հաւատարմութեան մէջ և՛ սաստիկ խանդոտ են և՛ վրէժխնդիր իրանց անհաւատարիմ ամուսիններից. մահու չափ կռւող են իրանց անձնական պատիւը պաշտպանելու համար. և շատ անգամ ևս յաջողում է նրանց վրէժ առնել իրանց խաբողներից։ Երբեմն նրանք դիւցազնների ֆիզիքական անչափ ուժի հետ օժտուած են և խօսքի կախարդական ուժով, նախատեսութեան և իմաստութեան շնորհքով, որ վէպերի մէջ մեծ մասամբ կանանց է միայն վերապահւում։ Սակայն այսպիսի դիւցազնական յատկութիւններով փայլում են միայն դեռ ևս այր չը ճանաչող կոյսերը. մարդու գնալուց յետոյ յաճախ նրանք կորցնում են իրանց գերբնական ուժերը և դառնում են հասարակ մահկանացուներ—կանացի բնաւորութեան այսպիսի ազնիւ և ազատ տիպերը ստեղծւած պիտի լինին այն ժամանակ, երբ որ մահմեդական ցեղերի ազդեցութիւնը դեռ ևս չէ եղել հայոց ընտանեկան կեանքի և մեր կանանց վիճակի վերայ, երբ որ կանանց բանտարկեալի պէս չէին փակում տան մէջ՝ նրանց պատիւն ազատ պահելու համար։

Ձմշկիկ-Սուլթանը, որ մի այսպիսի դիւցազնական կին է և «շատ գեօղալ փահլեան», այրւում է Դաւթի հետ ամուսնանալու փափագով։ Ձէնով-Յովանն, իբրև տան նահապետ, արդէն նրան ուզել էր Դաւթի համար. բայց Դաւթի սիրտը Ձմշկիկ-Սուլթանից աւելի գեղեցկին և կտրճին էր ուզում, այնպիսուն, որ իրանից շատ ստոր չը լինէր քաջութեամբ։ Այդ կինը Խանդութ խաթունն է, որի գուսանական գովքից միայն Դաւիթը սիրահարւում է նորա վերայ, որովհետև նա զարնան ձեան պէս սպիտակ է, բամբակի պէս կակուղ ու քնքուշ է, նորա ունքերը ղալամով քաշած են, աչքերը չինու կթխաներ են, իսկ ճակատի լայնութիւնը «եօթ ակիմ է, տել մէկ յաւել է»։ Զարմանալի չէ, որ մեր ժողովուրդը կնոջ գեղեցկութեան համար ճակատի լայնութեանն այդպիսի մեծ նշանակութիւն է տալիս, բայց ճակատի այդ լայնութիւնը միանգամայն և վկայում է Խանդութ

խաթունի չափազանց լաղթանդամութեան և զօրեղութեան մասին։ Եւ ճշմարիտ, Խանդութ խաթունը հասարակ կին չէ. Զէնով-Ցովանն անգամ գիտէ, որ քառասուն փահլևան եօթ տարի նորա դուռանը նստած են, բայց Խանդութ խաթունը նրանցից ոչ մէկին հաւանութիւն չէ տալիս և իրան արժանի չէ համարում։ Կռուի մէջ նա միայն Դաւթից է լեռ մնում և նրանից լաղթուելուց յետոյ միայն համաձայնում է նրան կին լինել։ Այսպիսի մի դիւցազնուհի կին, որ գուշակութիւն անելու իմաստութիւն ևս ունէր, կը ցանկանար, հարկաւ, իրան արժանաւոր մէկին ամուսին ունենալ. և Խանդութ խաթունը, դեռ Դաւթին չը տեսած, նորա քաջագործութիւնների համբաւը միայն լսելով, սիրում է Դաւթին, ինչպէս Շահնամէի մէջ Թեհմինան Ռուստամին, և մինչև անգամ ինքն երկու գուսան է ուղարկում, որ իւր գովքն անելով հրապուրեն Դաւթին, որ գալ իրան առնի։ Եւ Դաւիթը գնում է գուսաններից դրդուած։

Գուսանների մասին խօսք բացուելով, պէտք է նկատել, որ ինչքան ժողովրդական վէպը կենդանի և նախնական է, այնքան աւելի նկատելի է նորա մէջ գործող անձերի կապը վէպի երաժշտական և երգեցողական կատարման հետ։ Ցունաց քերթուածների (ποίημα) մէջ շատ անգամ բեմ են դուրս գալիս երգիչ ռապսոդներ, որոնք սփոփում են ժողովրդին տրոյական պատերազմի մասին երգելով. շատ անգամ հերոսներն իրանք և՛ երգիչ և՛ երաժիշտ են։ Հայոց ազգային վէպը, թէպէտև շատ երկար դարեր է ապրել ժողովրդի բերանում այն ժամանակից, երբ որ դեռ ևս նոր էր ստեղծագործուել,—դեռ ևս այդ երգեցողական և երաժշտական արուեստի նկատմամբ չէ կորցրել բոլորովին իւր նախնականութիւնը. վէպի գործողութեան մեծ մասը թէպէտև պատմում է, բայց փոքր մասն ևս մինչև այժմ երգւում է. մեւս կողմից ազգային վէպի մէջ, ինչպէս Իլիականի և Ոդիսականի մէջ, դուրս են գալիս և երգիչ-երաժիշտ գործող անձեր. ինչպէս Մսրայ կանայք, որոնք երգելով ճանապարհ են դնում Խօլբաչուն դէպի Սասուն, և երգելով ընդունում են նրան. ինչպէս վերոյիշեալ գուսանները, որոնք իրանց երգով և երաժշտութեամբ շատ էլ երկրորդական դեր չեն կատարում Դաւթի և Խանդութ տիկնոջ սիրոյ մէջ։ Վէպի հերոսներից երգիչ (ոչ երաժիշտ) են դուրս գալիս և Զէնով-Ցովանը, Խանդութ տիկինը, Մհերը, որոնք իրանց գործերի մի մասը, առաւելապէս սրտի զգացմունքները երգով են արտայայտում։ Ամենամեծ երգիչ է վէպի մէջ և Դաւիթը, որին պատկանում է վէպի երգերի մեծ մասը։ Յատուկ երգեցողութեան և երաժշտութեան շնորհք պէտք է ունեցած լինի և Դաւթի եղբայրը (ըստ հ. Սրուանձտեանի վարիանտի) Խոր-Գուսանը, որի անունն իսկ ցոյց է տալիս, որ նշանաւոր գուսան պէտք է եղած լինի. բայց Խոր-Գուսանի մասին երկու վարիանտի մէջ մի առանձին բան չը կայ պատմուած։ Երգիչ է դուրս գալիս և մինչև անգամ լուռ ու մունջ և խստաբարոյ Համտօլը, Խանդութ տիկնոջ դռնապանը։ Համտօլը քառասուն տարի

դռնապանութիւն է արել և, իւր տիրուհու արժանաւոր ծառան լինելով, արհամարհել է ամեն մի փահլևանի և նրանց հետ ոչ միայն խօսք չէ փոխանակել, այլ և նրանց բարևը չէ առել. բայց նա, Դաւիթին տեսնելով, վախենում է նրանից, և ոչ միայն բարևն է առնում, այլ և լեզուն բացում է և երգում է. թէպէտ Դաւիթն էլ, որ գազաններից ու դևերից չէր վախեցել, Համտոլից վախենում է և իւր կեանքի մէջ առաջին անգամ բարևը նրան է տալիս։

Թէպէտև Խանդութ խաթունը տոչորւում էր Դաւթի սիրով, բայց իւր զգաստութեամբ թոյլ չէ տալիս Դաւթին համբոյր առնել իրանից. նա բռնցքի մի հարւածով արիւնջուր է դուրս հանում Դաւթի բերնից, և իւր կանացի փառասիրութեամբ ցանկանում է, որ քաջագործութեամբ անուանի Դաւիթը յատկապէս իրան համար իւր քաջութիւնը ցոյց տալ և իրան բերէ մի քանի յայտնի փահլևանների գլուխը, որոնք իւր՝ Խանդութ խաթունի ձեռքն ուզում էին և, ինչպէս երևում է, ձանձրացրել էին նրան, ոչ այնքան իրանց քաջութեան և մարմնական զօրութեան պակասութեամբ, որովհետև Դաւիթն անգամ կասկածում է, որ նրանք իւր վերայ «զօռ» լինին,—որքան իրանց արտաքինով և ոչ մարդկային բնաւորութեամբ, որովհետև նրանք շատ աւելի հին ժամանակի սերնդի են վերաբերում, քան թէ Խանդութ տիկնոջ ժամանակն է։ Այդ փահլևաններից «Շերբգան-Խորասանի վերին ունք էնքան էր կախուի, որ էկիր էր հասե վըր սրտին, ու չանգալով կապեր էր ու զարկե ետևանց վըր պառեկին։ Էն մէկէլ Լօռայ Հըմզայ փահլիվանի ներքևի մռութ զգետին կ'աւլէր ու կերթէր»։ Դաւիթը մի օր ամբողջ, առաւօտից մինչև երեկոյ, լախտով ու նետուադեղով կռւում է այդ փահլևանների հետ և հազիւ կարողանում է երկուսին էլ յաղթել. նա «զերկուսի գլուխն լէ կտրեց, ու զերկուսի բրչամ (մազեր) լէ կապեց ի-րար ու խուրջինի աւա (նման) թալեց (ձգեց) վըր թարքին. ու ընդունց լեզուն կախուած՝ զգետին գութնի ակօսի աւա կը վարէր»։ Այն եղանակով վարում է և ռուսաց վէպի մէջ Իլիա Մուրոմեց հսկան Սոլովէյ Ռազբոյնիկի հետ, որի լեզուն նոյնպէս ձիու դաւակից կախ ընկած վարում է գետինը։

Շերբգան-Խորասանն և Լօռայ Հըմզայ փահլևանները ներկայանում են իբրև առասպելական հրէշ-տիտաններ, թերևս աւելի աւագ քան թէ Մսրամելիքն և դևերը, որոնք իրանց խօլականութեամբ հանդերձ այդպիսի անճռոնի ցուցանք չեն ներկայանում վէպի մէջ, որովհետև ժողովրդական վէպի մէջ հսկան, որքան աւելի հին և սկզբնական ժամանակի էակ է, հետագայ ժամանակում այնքան աւելի գերբնական, կամ լաւ ասած, անբնական հրէշաւոր պատկերով և աւելի զօրաւոր է դուրս գալիս. Դաւիթը, որ-յոչ մի բանից վախեցել չէ և վստահ է իւր ուժի վերայ, թէպէտ չէ վախենում դրանցից, բայց մի բոպէ կասկածում է նրանց յաղթելուց։ Սակայն ինչպէս հնութեան բոլոր առասպելական

(միթական) զարհուրելի հրէշներն ու տիտանները տեղի են տալիս մարդկային համակրական դիւցազններին, այդպէս և այդ փահլեանները երկիւղ են տանում և յաղթւում են Դաւթից, որովհետև սա «Սրգօյի (Ս. Սարգսի) ճորտերուցն է», ծառաներիցն է։ Իսկ Ս. Սարգիսը, ինչպէս մի անգամ նկատեցինք, անունով քրիստոնէական սուրբ է, որ փոխանակած է մի հին, հեթանոսական աստուծու, բայց ժամանակով աւելի հետադայ աստուծու, քան թէ տարերաբան տիտաններն են, որոնք պարտութիւն են կրում իրանց ժառանգներից, ինչպէս յունաց տիտաններն Արամազդից։—Խանդութ տիկնոջ դռնապան Համտօլն ևս իւր երկար պռուկով մտնում է այս փահլեանների կարգին, ուստի և Դաւիթը նրանից ևս վախենում է։

ԺԱ.

Մեր վարիանտով Խանդութ խաթունը հարկ չէ համարում փահլեանների գլուխն ուղելու, քանի որ նա գիտէր թէ ինչպէս Դաւիթը փահլեանների իւր դէմ լարած դաւաճանութիւնն ի դերև էր հանել և նրանց թըրերը բոլորը ծնկին խփելով կոտրատել էր.—Դաւիթն ինքն է ցանկանում, որ առիթ լինի իւր նշանածի առաջ և իւր նշանածի համար մի քաջութեան ծառայութիւն ցոյց տալու, մանաւանդ որ նշանածը, բռընցքով զարնելով, ամօթով էր թողել իրան։ Դաւիթը խնդիրքով դիմում է Աստուծուն. և աստուածային զօրութիւնը, որ Դաւթի շատ աղաչանքներին լսել էր, նորա այս խնդիրքն էլ կատարում է։ Թշնամիները պաշարում են Խանդութ խաթունի քաղաքը. ով պիտի կռուի թշնամիների դէմ.—Դաւիթն է միայն կռւում և ջարդում թշնամիներին։ Այստեղ հանդէս է գալիս մի նոր դիւցազնական պայծառ անձնաւորութիւն, մի և նոյն Աքամելիքի դիւանական շառաւիղը, Ցռան-Վէրգօյի որդի Պարոն-Աստղիկը, որին թշնամիները խաբելով Դաւթի դէմ կռւի են հանում։ Պարոն-Աստղկի պարոն մակդիրը վկայում է, որ խաչակիրների ժամանակի ազդեցութեան տակ է աւելացած, իսկ Աստղիկ անունը հեթանոսական հնութիւն է ցոյց տալիս։ Պարոն-Աստղիկն իւր թևաւոր հրեղէնի վերայ նստած՝ փրփռում է Դաւթի գլխին և կրակ է թափում նորա վերայ, առանց ճանաչելու նրան։ Երկու թրեր՝ Հալունին և Կայծակին, իրար են հանդիպել մի և նոյն ցեղից երկու հսկաների ձեռքին, և կայծակներ են թափում. «Թրէ շառաւիրքը» օրը ցերեկով անգամ խփում է Խանդութ խաթունի դուռ, պատուհան, ու երդիկ փակած սենեակին, և Խանդութ խաթունը, հակառակ իւր խոստման, կանացի հետաքրքրութեամբ չէ դիմանում. պատուհանը բանում է և ահ ու սարսափով հանդիսատես է լինում դիւցազնական կռւին, որի մէջ Դաւիթը, չը ցանկանալով վնասել Պարոն-Աստղկին, պատուաւոր դիրք չ'ունէր։ Բայց, աւաղ, դիւցազնին էլ կնոջ հաճոյանալու փափագը յաղթում է, և երիտասարդ ու անփորձ հսկայ Պարոն-Աստղիկը, որ, ներքին դիւցազնա-

կան ուժից դրդված, արկածների ետևից էր ընկել, գետին է տապալում պատերազմների մէջ վարժ ու փորձ գերբնական ուժի տէր Դաւթից։ Կուր սէրը վառում է և՛ անմիտ դևին, և՛ գազան-հրէշին, և՛ աղնիւ դիւցազն Դաւթին, որ՝ իւր սիրուհու աչքին նուաստ չ'երևալու համար՝ սպանում է ազգականին. և այս սպանութիւնը Դաւթի բնաւորութեան մէջ միակ խաւար գիծն է, որ դժուար թէ քաւելի լինի սպանելուց յետոյ սպանողի, սրտի ցաւից, ուշաթափ լինելովը։

Մի յանցանքը ետևից քաշ է տալիս միւս յանցանքը. սէրը մի անգամ կուրացրեց Դաւթին, բայց սիրոյ գիրգ բազուկներում նա մոռանում է և իւր օրհասական երգումը, որ տուեց «Խաչ-պատարագինի» վերայ մախանքի վրէժխնդրութեամբ լցած Զմշկիկ-Սուլթանին։ Ո՞ր դիւցազնի մահուան պատճառը սէրը, կինը չէ եղել, որ Դաւթինն ևս կինը չը լինէր։ Բայց մինչդեռ ուրիշ ազգերի դիւցազները, ինչպէս և մեր հէքիաթների մէջ շատ հերոսներ, ընկնում են խաբեբայ ու անհաւատարիմ կնոջ նենգութեամբ, մեր Դաւիթն աւելի բաղդաւոր է իւր մահով։ Դաւթի կինը հաւատարիմ էր. նա մինչև անգամ Դաւթի մահից յետոյ կսկծու թոչն է խմում և մեռնում, կամ, ինչպէս հ. Սրուանձտեանի վարիանտում է, բերդի գլխից իրան ներքև է ձգում և մեռցնում. Դաւիթն ընկնում է խանդոտ Զմշկիկ-Սուլթանի ձեռքով, որ ասում է իւր կոչդիւցազնական վիրաւորուած բոլոր հպարտութեամբ.

«Դաւիթ, ինչու՞ ես խօրօտ չէր,
Զի ուզեցին քե, տիւ ձի չը խաւնար,
Վար ձի գնացիր, Խանդութ խաթուն բերիր։
Դէ ար՝ ես տիւ կռիւ անենք.
Եա ես քե տը սպանեմ,
Ես լէ, Խանդութ խաթուն լէ մնանք որբաւարի,
Եա տիւ ձի սպանես,
Նուր էրթաս, Խանդութ խաթնի ծոց պառկես»։

Իսկապէս ասած, Դաւթին ընկճում է դիւցային գերագոյն զօրութիւնը, և ոչ Զմշկիկ-Սուլթանը. որովհետև նա սիրոյ հեշտութիւնից արբեցած, մոռանում է իւր անդրդելի երդումը Խաչ-պատարագինի վերայ, որ իրան միշտ պահապան և օգնական էր եղել, երբ որ ինքը ճշդութեամբ կատարում էր նորա արդարութիւնը. ժողովուրդը չէր ներիլ, որ, առանց աստուածային զօրութեան մատին, Դաւթի պէս մի կատարեալ դիւցազն յաղթահարէր որ և է ուժից և կամ սպանէր Զմշկիկ-Սուլթանից։ Ռուսաց հսկաներն ևս աշխարհքից վերանում են ոչ աստեղոր, այլ մի երկնային, գերբնական ուժի ձեռքով, որին պարծենկոտութեամբ կռիւ են կանչում։ Որպէս զի Դաւիթը սպանէր, դորա համար հարկաւոր էր, որ

Նա ընկնէր նախ Աստուծու աչքից· այդ անել է տալիս Նրան մի ազնիւ և սիրող կին, իսկ մի ուրիշ, սիրով կատաղած կին անազնիւ և ստոր դաւտագողութեամբ սպանում է Նրան։ Սպանութեան այդ գաղտագողութիւնն անգամ, երբ որ ժողովուրդն ասում է՝ «Դաւիթ սպանուաւ առանց կռիւ», ժողովրդի համար մի տեսակ ցաւ, բայց և մխիթարանք է, որ իւր սիրելի դիւցազնին դարձեալ չեն կարողացել սպանել ճակատ առ ճակատ կռուելիս, այլ ետևից գողի նման են հարուած իջեցրել, և այն կրակացրած խոփի Նետով, և այն ժամանակ, երբ որ դիւցազնը բոլորովին մերկ էր, չ'ունէր իւր դիւցազնութեան ոչ մի զէնք ու զարդը՝ Խաչ-պատարագին, գլխու-գոտին, կապէն-խաբուկին, քամարն ի մէջքին. Նա նստած չէր Քուռկիկ-Ջալալինի վերայ, և Նորա ձեռքին չը կար Կայծակի Թուրը, և ոչ իսկ լախտը, նետ ու աղեղը կամ վահանը։ Ցաւալի մահ, որով գրեթէ բոլոր դիւցազնները վերջացնում են իրանց սխրագործական կեանքը։

Հ. Սրուանձտեանի վարիանտում Դ'աւթի մահն այսպէս անշուք չէ նկարագրուած. երբ որ Դաւիթը մերկ ժամանակ Աբամելիքի ցեղից Շըշըմ խանումի աղջկայ Նետով մահացու հարուած ստացաւ մէջքին, «Դաւիթ էլաւ կայնաւ, ու բոռաց. որ բոռաց՝ ձէն (Խլաթայ) գնաց ի Սասուն», Նման ֆրանկների դիւցազն Ռոլանդի ձայնին, որ Պերինեան լեռներից անցնում է մինչև Մեծն Կարոլոսի բանակը. «Ջէնով-Ցօվան, Խոր-Գուսան, Քեռի-Թորոս, Ճնճղափոքրիկ ու Ցռան Վէգին, (Սասնու դիւանական ճժերը) ժողվին զիրար։ Ջէնով-Ցօվան լէ Սասնու բոռաց։—Ու էկան Դաւթի հաւարին։ Դաւիթ լէ ըդ ջրի մէջ զուր աղբոր ձէն լսեց»։ Նրանք ման եկան, գտան Դաւթին հարւածող «չինի աչքերով» աղջկան, հանեցին թագնուած տեղից. «Բռնեց Դաւիթ՝ զոսք դրեց վըր մէկ ոտվուն, ու քաշեց ճըղտեց, թալեց սարու տըկու գետ»։ Դաւիթն, իւր վրէժը իւր ձեռքով լուծելուց յետոյ, չորս օրից մեռաւ։ Սակայն դրանով միայն չէ վերջանում Դաւթի մահուան վրէժխնդրութիւնը. Մհերը, իւր հօր մահը հօրեղբայրներից իմանալով, շատ լաց ու արտասուք թափեց, «հեծաւ զպապու (հօր) քուռակ, ու գնաց ի Խլաթ [1], քար ու քանդ էրեց։ Հըմլայ կ'աւրէ... ու կ'ելնէ Նըմրութայ գլուխ, կ'իշկէ որ ծուխ կ'ելնէր. հաղմ լէ կը դառնէր։ Տեսաւ որ պառաւուկ մէր մանցի, զէն լէ բռնեց. զամէն մէկ ոտ կապեց մէկ ծառ, ու զծառեր թողեց. զէդ լէ հմալ սպանեց, Խլաթայ ծուխ ու մուխ կտրեց»։

---

[1] Եթէ Ջմշկիկ-Սուլթանը Ջմշկածագի, տէրը չէ. ինչպէս ենթադրել ենք, կարելի է կարծել, որ նա Խլաթայ տէրը պիտի լինի. այն ժամանակ երկու վարիանտի պատմութիւնները կը նոյնանան և կը լրացնեն իրար. որովհետև Ջմշկիկ-Սուլթանն և «չինի աչքերով» աղջիկը մի և նոյն անձը կը լինին, և խլաթցիները, իրանց տիրուհու առաջնորդութեամբ, Դաւթի դէմ դուրս եկած կը լինին, և ոչ ասպատակաբար, ինչպէս Հ. Սրուանձտեանի վարիանտում է։

ԺԶ.

Մենք վերջացրինք Դաւթի դիւցազնական վէպն իւր գլխաւոր հերոսներով՝ Դաւիթ, Մսրամելիք, Խանդութ խաթուն, Պարոն-Աստղիկ, փահլաւանները և Ձմշկիկ-Սուլթան. բայց այդ հերոսներից զատ կայ և մի անձնաւորութիւն, որին մոռացել ենք, և որը փոքր դեր չէ խաղում Դաւթի վէպի մէջ, Դաւթի մանկութիւնից մինչև մահը. նա Դաւթի հայրագիրն է, և ամեն մի գործողութեան մէջ Դաւթի հայրն է։ Ձէնով-Յովանի ուրիշ յատկութիւնների մասին խօսելը թողնելով, որովհետև մեր նպատակը չէ ազգային վէպի գեղարւեստական քննութիւն գրել, մենք ուզում ենք մատնացոյց անել միայն նորա դիւցազնութեան վերայ։ Ձէնով-Յովանը օժտուած չէ առանձին հերոսական ուժով, թէպէտև նա հասարակ մահկանացու էլ չէ, որովհետև ձեռքը դնում է Կարմիր և Սպիտակ ձիերու մէջքին, ձիերն իրանց փորը խփում են գետնին, նա կարողանում է հրեղէն ձիու վերայ նստել,—բայց նա ունի դիւցազնական ձայն. «Հմալ ձէնով էր, որ եօթն գոմշու կաշի կը թալէր արև չորցնէր, ու կը փաթթէր զինք, ու բոռէր, որ չ՚եղնէր պատռուէր». «Ձէնով-Յովան կանչեց, ձէն ընկաւ սար ու ձոր»։ Նորա ձայնը Սասնուց մինչև Խլաթ է հասնում, նորա ձայնը մըտնում է և գետնի տակ Մհերի «մաղաղէն»։ Դաւթի ձայնն ևս Խլաթից Սասուն հասաւ, բայց այդ Դաւթի սեպհական յատկութիւնից չէր, այլ նորա օրհասական դրութիւնից, որ իւր հսկայական ձայնին առանձին ուժ էր տալիս։

Մեր հէքիաթների մէջ շատ սովորական երևոյթ է մի անձի մէջ ամփոփել որ և է յատկութեան ծայրայեղ կատարելութիւն միւս դիւցազնական յատկութիւնների բացակայութեան հետ։ Այդպիսի յատկութեան տէր անձերն են՝ լաւ լսողներ, որոնք ականջները դնում են գետնին և ամեն՝ ինչ որ աշխարհիս վերայ կատարւում է, լսում են. սրինդ ածող հովիւներ, որոնց նւագից լեռները, քարերն ու ծառերը և ամեն ինչ պար են բռնում. արագ վազողներ, որոնք մի ջաղացաքար մի ոտքին, մի ջաղացաքար միւս ոտքին կապած անգամ այնպէս վազում են, որ ետևներից հասնել չի լինիլ. բացի դրանցից կան և ծով կուլ տուողներ, որոնք ծովի ջուրը կուլ տալուց յետոյ բաց են թողնում և ջրհեղեղ անում. շատակերներ, որ ամեն ինչ ուտում են և դարձեալ ասում են թէ քաղցած մնացանք, և ուրիշ լաւ ու վատ ծայրայեղ յատկութիւնների տէր անձեր, որոնք իրանք մի նշանաւոր գործ չեն կատարում մենակ կամ իրանց անձի համար, այլ գրեթէ բոլորը խմբւում են գլխաւոր հերոսի շուրջը, որ ունենում է անձնական քաջութիւն և իմաստութիւն։ Այդպիսի մի բարձր բոռալու յատկութիւն ունի և Ձէնով-Յովանը, որ միանգամայն և խոհեմ նահապետ է իւր տան մէջ, ինչպէս և Շահնամէի մէջ Զենգը դուրս է գալիս իբրև ծայրայեղ սրատեսութեան ներկայացուցիչ, որի աչ-

քերը մութ խաւարի մէջ անգամ պարզ տեսնում են հեռաւոր առարկաները, և որ, միանգամ միայն մէկին տեսնելով, այլ ևս չէ մոռանում նորա կերպարանքը։—

ԺԷ.

Մհերը Դաւթից դիւցազնութեան մէջ ոչ մի բանով պակաս չէ, մինչև անգամ աւելի է իւր բնական ուժով։ Մհերը՝ դա մի մարմնացում է մարդկային չափազանց ոյժ ու զօրութեան, սարսափելի մարմնացում թէ ուժի որակով և թէ քանակով։ Նա դեռ չէր ծնուած, որ Դաւիթն ասում է Խանդութ տիկնոջ. «Թէ որ ըղ տղէն ինձնից է, վրէն նշան մի, զօրութիւն մի տ'եղնի»։ և ինչպէս սպասելի չը լինէր, որ Մհերը մի արտակարգ նշան կամ զօրութիւն չ'ունենար, քանի որ նա Դաւիթ և Խանդութ հսկաների սերունդն էր, քանի որ նա Դաւթի չամբուշ ժամանակի ծնունդն էր։ Մհերը ծնւում է, և ծնւելուց անմիջապէս յետոյ յայտնի է լինում նորա հսկայութեան երկու կողմն ևս, անսահման ոյժն ու այդ ուժի դէպի չարն ունեցած ուղղութիւնը։ Խանձարուրքի սովորական բինդի (կապ) տեղ նրան փաթաթած են գութանի շղթայով. բայց Մհերը «կերբոր լաց ու ճմլկտած մէջ ճղօրին, ըղուր վրաւու փաթուկ զրնջիլ կտոր կտոր եզաւ»։ Նա ծնւել է, բայց մի ձեռքը խփած է, և ոչ մի մարդ, մինչև անգամ մայրը, չի կարողանում բաց անել. Դաւիթն է միայն գալիս և ձեռքը մաժում, բանում է, և ահա ինչ է տեսնում. «Տեսաւ որ զուլանկթ մի արուն ուր ձեռվու մէջն էր», և բացականչում է հայրը. «Հայ, հայ... զաշխարհք արեր է կաթ մի արուն, դրեր է ուր ձեռվու մէջ։ Թ'որ ըղի մնաց, ըղուր մօտէն զարմանալի բան տ'եղնի»։ Մհերի ամբողջ կեանքի ճիշդ բնաւորական նկարագիրը իւր հօր հէնց այս մի քանի խօսքով արտայայտւում է։ Մհերի չար և աւերիչ բնութեան արտայայտութիւնն է նորա ձեռքի մէջ ծնած մի կաթ արիւնը, ինչպէս և մի. և նոյն աւանդութիւնը, որ Լանկթամուրի համար ևս ասւում է, մեկնում է և Լանկթամուրի ամբողջ կեանքը։ Լանկթամուր և Մհեր, մէկը պատմական անձնաւորութիւն, միւսն առասպելական դիւցազն. բայց որքան նմանութիւն նրանց երկուսի ձեռքի մէջ ծնւած մի կաթիլ արեան մէջ և նրանց աւերիչ կեանքի մէջ։

Ռուստամի որդի Զոհրաբի համար գրում է Ֆիրդուսին. «Զարմանալի մանուկ էր Զոհրաբը։ Նա ծնւեցաւ ժպիտը բերնին. ոչ մի բանից երբէք լաց չէր լինում. աճում էր այնպէս հրաշալի կերպով, որ մի ամսական ժամանակ արդէն տարեկան էր երևում. երեք տարեկան հասակում նա արդէն կտրճաբար արշաւում էր ձիով դաշտի վերայ. վեց տարեկան՝ նա հզօր էր ինչպէս առիւծ. իսկ երբ որ տասներկու տարեկան դարձաւ, ոչ ոք այլ ևս չէր կարողանում նորա հետ մրցել. Նա վիթխարի հասակով էր, արի և գեղեցիկ»։ Նա իւր հետ կռւողին ոլորում էր

աղեղի պէս. առիւծին սանձում էր աղւէսի նման. կաղնի ծառն ու նոճին, երբ որ նա ճօճում էր, նորա ձեռքին կռանում էին ինչպէս հասարակ ճիւղեր. Նա, իրան համար ձի ընտրելիս, որ ձիու վերայ որ ձեռքը դնում էր, միայն ձեռքի երկաթի ճնշումից ձին իսկոյն գետնին էր կպչում (ինչպէս մեր վէպի մէջ Ձէնով-Յովանի ձեռքից)։ Այսպիսի էր մանուկ Զոհրաբը, որ այնքան շուտ է մեծանում և իրանի վերայ կալը դնում, որ Ռուստամն անգամ, թէպէտև գիտէր, որ արծուի ձագն արծիւ պիտի լինի, կասկածում է, որ իւր որդին անգամ այդպիսի փոքր հասակում այդպէս զօրեղ չէր կարող լինել։—Տեսնենք ինչ է ասում մեր ազգային վէպը Դաւթի որդի Մհերի մանկութեան մասին.

«Ինչ ուրշի տղէք տարով կը մեծանին՝ Մհեր օրով,
Ինչ ամսով՝ Մհեր սհաթով։
Տարին որ լրացաւ,
Մհեր էլաւ, գնաց մէջ քաղքին ման կը գար.
Ջբարղի ծառեր կը կոտէր,
Քաղքի տղէք կը խեծուցէր,
Կը չարէր վար բարդու ծառին,
Ծառու ծէր կը թորկէր (բաց կը թողնէր)։
Ինչ ծառը ծէր կը բարձրացնէր,
Քաղքի տղէք, ամէն մէկ ճիժ,
Մէկ մահլայ (թաղ) կը թլէր (կը ձգէր)»։

Մհերն աւելի արագ է աճում, քան թէ Զոհրաբը. և նա մի տարեկան արդէն արտայայտում է իւր բնաւորութիւնն և ուժը։ Ի՞նչ է Մհերի՝ քաղաքի երեխաների գլխին խաղացածը, եթէ ոչ մի երեխայական, բայց հսկայական չարութիւն, որ մի առանձին դիտաւորեալ չարամիտ նպատակ չ'ունի։ Բայց ինչ է և նորա կամրջի խաղը, որ ութ տարեկան հասակում խաղում է անճար մնացած սասունցիների գլխին.—դարձեալ մի անմիտ, բայց չար գործ, որ նա կատարում է ոչ թէ յատկապէս քաղաքացիներին տանջելու նպատակով, այլ միայն նորա համար, որ ներքին ուժը ստիպում էր նրան այդ անել. Նա մի ձևով պիտի դուրս թափէր իւր ներսում հաւաքուած զօրութիւնը, որ նորա մէջ եռում էր, նրան տանջում էր, հանգիստ չէր տալիս, մինչև որ դուրս չէր ղեղւում. և Մհերն իւր ուժը թափում է իւր քաղաքացիների գլխին, որովհետև թշնամիներ չը կան, որ նրանց հետ կռուի։ Դաւիթն ես մանկութեան ժամանակ զօրեղ էր, բայց նա Մհերի պէս չար գործեր չէր կատարում, որովհետև մեծ տարբերութիւն կայ երկուսի զօրութեան մէջ. մէկ էլ որ Դաւիթը պարապ չէր մնում, իսկ Մհերը պարապ էր, առանձին գործ չ'ունէր. իսկ այդ պարապութեան մէջ ներքին ուժն ուտում էր Մհերին։

Մհերն այդ ուժի բռնկոցից մինչև անդամ իւր հոր հետ կպչում է, երբ որ սա նրան մի ապտակ է տալիս. և հայրը փորձով տեսնում է, որ իւր որդին, դեռ ևս փոքր, մինչդեռ ինքը թուխ մօրուս երիտասարդ էր, մարմնական զօրութեամբ հաւասարւում է իրան։ Ինչպէս երկու սար դնան, դան, դիպչեն իրար, այնպէս հայր ու որդի իրար են առել. փոշին ամպի պէս բարձրացել, նրանց բռնել է. նրանք արիւնի մէջ կարմրացել են, բայց դեռ չեն բաժանւում. հասարակ հողածիններին վախենում են մօտենալ նրանց, որ ոտքերի տակ չ'ընկնեն։ Ի՞նչ անէ Խանդուբ տիկինը. Մհերը նորա մայրական ձայնին չէ լսում. Դաւիթն էլ իւր ահու է զարնում Մհերին։ Վերջապէս բարերար Աստուածը լսում է մօր աղաչանքին, և նորա հրեշտակն իջնում, բաժանում է լեռնանման հսկաներին, ինչպէս երկու կուռող արլորի։ Հայրը սարսափում է այդ անասելի ուժի վերայ և մտածում՝ եթէ Մհերն այսպէս է, հապա նորա որդին ինչ կը լինի, նա աշխարհս անշուշտ կ'աւերէ իւր ուժով. և ահա նա անիծում է իւր որդուն, որ նորա մօտից ժառանգ դուրս չ'ընկնի, բայց միանգամայն և մահ չը լինի նրան։ Անէծքի այս երկրորդ մասն ինչու համար է.—միայն նորա համար, որ Դաւիթը դիտէր, որ իւր որդու անչափ ուժը միայն ուրիշներին չէր տանջում, այլ աւելի ևս իրան՝ որդուն պիտի տանջէր. և թող չաւիտեան տանջւի նա, որ իւր հոր հետ կռիւ արեց և նրան ամաչեցրեց ուրիշների առաջ։ Բայց արդեօք Մհերն արժանի էր հոր սոսկալի անէծքին.—նա նոյնքան մեղաւոր էր հոր առաջ, որքան մեղաւոր էր, որ նա ինքն անասելի ուժի տէր էր ծնւել. նոյնքան մեղաւոր էր իւր հոր հետ կռուելու համար, որքան հայրն ևս մեղաւոր էր, որ իւր կատաղի բարկութեան մէջ, որդուն այնպէս չաւիտենական տանջանքի անէծք է կարդում. որ բարի հայրը կ'անէ այդ, ինչքան էլ որդին չար լինէր։ Դաւիթն անում է, բայց ոչ թէ Դաւիթն է անում, այլ Դաւիթի բարկութիւնն է անում, ինչպէս և ոչ թէ Մհերն էր անհնազանդութեամբ կռւում, այլ Մհերի ուժը։ որ լցւել էր և պէտք է իւր ամանից դուրս թափւէր։

Թէ Մհերը ճանաչում էր միանգամայն և հոր հայրական իշխանութիւնը, և հայրն էլ սիրում էր Մհերին և այդ կռւի և անէծքի եղերերգը միայն զայրոյթի տակ էր կատարւել, և ոչ չար դիտաւորութեամբ,—այդ երևում է այն հոգեկան դրութիւնից, որի մէջ ընկնում է Մհերն անմիջապէս հոր մահից յետոյ։ Շատ անբնական է թւում, որ Մհերին, որին Դաւիթը յաղթել չէր կարողանում, և որ իւր հորը չէր ականջ անում, Ջէնով-Ցովանը ծեծէր և ասէր. «Մհեր, կոնդ ես, խետ քեռ խէր կռիւ արիր։ իլի, գնա մեր քաղքէն, մը դադրի մեր քաղաք», և իւր ուժից դուրս բան չը ճանաչող Մհերը լսէր Ջէնով-Ցովանին և Սասմայ քաղաքից դուրս ելնել ուզէր։ Այս կտորն աղճատուած համարել (ինչպէս առհասարակ աղճատուած է Մհերի վէպի վերջին մասը) չենք կարող, որովհետև հետը կից է սորա շարունակութիւնը, որ ոտանաւորով է և որ մեծ վիպական հնու-

թիւն ունի իւր մէջ։ Մհերը չէ հակառակում Զէնով-Ցովանին, որովհետև նա մի տեսակ խղճահար հոգեկան գրութեան մէջ է ընկած իւր հօր հետ կռուելուց յետոյ։ Բայց և այնպէս նա չէ կատարում Զէնով-Ցովանի խօսքը, մինչև որ չէ գնում ծնողների գերեզմանի վերայ. նա այնտեղ ներողութիւն չէ հայցում հօրից, որովհետև ներողութեան գաղափարը նորա համար անհասկանալի է, այլ նա ծնողների գերեզմանի վերայ լալիս է և խորհուրդ է հարցնում իւր աքսորի մասին.

«Խէրիկ, վ'ինչխ անեմ,
Ասար ձի Սասմայ քաղքէն
Թեհրար ի խանած»։

«Ասծու հրամանքիւ ձէն ընկաւ խօր դերեզման, դերեզմընից ձէն էլաւ, ասաց.

«Որդի. վ'ինչխ անեմ,
Գացիր մէջալն ի ձեռնէս,
Թափիր մաղերն երեսէս։
Գնա Հալաբայ քաղաք,
Գեռ խաց թխուկ է,
Գեռ կերակուր եփուկ է»։

Սոյն իմաստով և գրեթէ սոյն ձևերով պատասխանում է և մայրը, միայն կանացի բնութեան յատուկ եղանակով։ Հայրը թողութիւն չէ տալիս որդուն, բայց այս խօսքերով թէ՝ որդի, հապա ես ինչ անեմ, կարողութիւնը ձեռքիցս գնացել է, ուզում է ասել որ՝ եթէ իշխանութիւնն իմ ձեռքիս լինէր, քեզ չէին կարող տարագրել Սասմայ քաղաքից.—այդ ցոյց է տալիս, որ հայրը դեռ սիրում էր իւր անիծեալ որդուն։ Իսկ՝ գնա Հալաբայ քաղաք ասելը, որ և մայրն է կրկնում, դա մի ճակատագրած իրողութիւն էր, որ ծնողներն, իբրև հանդերձեալ աշխարհի բնակիչ, յայտնում են իրանց որդուն, որ պիտի կատարէր։ Մհերը հնազանդում է իւր ճակատագրին, և, Աստուծուն աղօթելուց յետոյ, ճանապարհ է ընկնում դէպի Հալաբ, առանց ճանապարհը ճանաչելու։ Մհերը գնում է. նա իւր հետ տանում է միայն իւր անչափ զօրութիւնը. նա զէնք չ'ունի, ձի չ'ունի, մենակ է։ Թէպէտև Մհերի վէպի մնացած մասը խառն և անորոշ է և թերատ, բայց դարձեալ պարզ կերպով երևում է Մհերն իւր ուժով և անիծեալ դրութեամբ ամբողջապէս։ Ճանապարհին նա հանդիպում է Գոհար խաթունի մօրը, որ այնպէս է նկարագրուած, ինչպէս հէքիաթներում նկարագրում են դև-պառաւները. Մհերն ևս նորա հետ այնպէս է վարւում, ինչպէս հեթանոսների մէջ հերոսները վարւում են դև-պառաւների հետ, և պառաւը խոստանում է Մհերին տալ իւր աղջիկը, որ նոյնպէս մի կոբրճուհի է։ Մհերն և Գոհարը կոտորում են Հալաբայ թագաւորի բոլոր ժողովրդին և ամուսնանում են։

Քառասուն տարի Մհերն ապրում է Գոհար խաթունի հետ, և կատարում է հօր անէծքը. նրանք անորդի են մնում. մեռնում է Գոհարը, և Մհերն ելնում է աշխարհիս վերայ աստանդական շրջելու իւր հօր անէծքի բոլոր ծանրութեան տակ. Նա ոչ մի նպատակ չ'ունի, որին ձգտէր, նա թափառում է իբրև որսորդ։ Բայց ինչ է այժմ Մհերն իւր յիսնամեայ հասակում, այսինքն այն ժամանակ, երբ որ մարդս իւր հոգեկան և մարմնական կատարեալ զարգացման մէջ է լինում.—ուրիշ ոչինչ, բայց եթէ ոյժ, ամբողջապէս ոյժ, անպիսի ոյժ, որ նոյն իսկ իւր տակին ճնշում է և իրան դիւցազնին։ Նա իւր այս ուժի ձեռքին ոչ թէ հսկայ է, այլ մի թոյլ արարած, որին ամեն հեշտ միջոցով կարելի է յաղթահարել.

«Մհեր ելաւ, կ'ուզէր որ գնայ,
Որ զոտքեր կը թլէր՝ կ'երթէր մընչ խողուն.
Խող չէուջե թուլացիր էր,
Ջեր ղադրի չէուջե Մհերին»։

Նա ձի է նստում և ձիով է ուզում փահլեանութիւն անել.

«Ձին խեծաւ, քշեց մընչ դաշտին,
Գետին չէուջև թուլացիր էր,
Ձին կը խրուէր մընչ խողին,
Խող չէր ղադրի չէուջև Մհերին»։

Ի՞նչ անէ Մհերը. Նա խաղալիք է իւր չափազանց ուժի ձեռքին. մայր հողը նորա ոտքերի տակ թուլացել է, աշխարհքը նրան չէ վերցնում, որովհետև ինքն այս աշխարհի զաւակ չէ այլ ևս. բայց նրան մահ էլ չը կայ. ուրեմն հսկան յաւիտեան պիտի տանջուի և իւր ուժի համար հէնց ծաղր ու ծանակ պիտի լինի հասարակ որսորդների և փահլևանների ձեռքին։ Նա այժմ շատ լաւ հասկանում է թէ ինչ բան է հայրական անէծքը, որ նրան անմահացրեց իւր ուժի տանջանքով։ Նա գերագոյն զօրութեան է դիմում, որ իրան մի ճար անէ, աշխարհքից վերցնի. «Ո՛վ Տէր Աստուած, իմ խօր անէծք ձի խասիր ի... ղՔեզ եմ կանչեր, Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանայ քար...» Բայց այդ գերագոյն զօրութիւնը, որ Դաւթի ամեն մի խնդիրքն իսկոյն լսում և կատարում էր, խուլ էր Մհերի ձայնին, երբ որ նա դէպի Հալաբայ քաղաքը գնալիս դիմում էր նրան ճանապարհի համար, խուլ է և այժմ, երբ որ նա դիմում է նրան, որ աշխարհքից վերցնի իրան։ Նա քսան տարի Խլաթայ այրի տակ աղօթք է անում այս մի բանի համար միայն, և հազիւ թէ «Աստուած հրամանք էրաւ, զէնիկ մարմնաւոր եթալ Վանայ քար», ուր պիտի յաւիտեան մնայ կենդանի։

Մհերի պէս այսպիսի սարսափելի ուժի տէր դիւցազներ դուրս են գալիս և ուրիշ ազգերի վէպերի մէջ. պարսից Ռուստամը քսան փղի չափ ոյժ ունէր, բայց և Ռուստամն իւր ուժով բաղդաւոր էր, այն ինչ Մհերն

անբաղդ է, որովհետև Ռուստամը դևերի հետ յարաբերութիւն ունէր, և դևերից մէկը, մի լեռան ոգի, քաջք, նորա ուժի մի մասը վերցրել էր նրանից, որ չը վնասէր նրան։ «Ռուստամն այնպիսի անչափ ույժ ունէր, որ ոչ միայն թշնամիներին, այլ և իրան էր վնաս. նրան երկիրը չէր վերցնում իւր վերայ. երբ որ նա ման էր գալիս քարքարոտ առապարով, նորա ոտքերի խոր հետքերը մնում էին քարերի վերայ, ինչպէս աւազի վերայ. ամեն մի քայլափոխի նորա ոտքերը թաղւում էին գետնի մէջ և ինչպէս երկաթի արօր վարում էին հողը»։ Ռուստամն այսպէս դժւարութեամբ մի անգամ անցնում էր ձորի միջով, որ լեռան քաջքը խղճաց նորա վերայ և նորա ուժի աւելցուկն առաւ իւր մօտ պահեց, որ ծերութեան ժամանակ, երբ որ Ռուստամն ուժից պիտի ընկնէր, նրան վերադարձնէր։

Իսկ մեր Մհերին լեռան քաջքերը չեն օգնում, ուժի մի մասը վերցնելով նրանից, որովհետև նա հայրական անէծքի տակ էր. բայց և այնպէս նրան օգնում է դարձեալ լեռը, Վանայ քարը, Տոսպան բլուրը, որ վերցնում է նրան, այն ինչ աշխարհը չէր կարողանում վերցնել. Նման ռուսաց վէպի մէջ դուրս եկած մի վիթխարի հսկային (колоссъ), որին երկիրը չէ վերցնում, և որ պառկած է սարի վերայ։ Ռուսաց վէպի մէջ Սվեատոգոր հսկան ևս ապրում է լեռներում. նրան նոյնպէս երկիրը դժւարութեամբ է կրում։ Սվեատոգորն ուզում է երկրի ծանրութիւնը բարձրացնել, բայց ինչքան բարձրացնում է, այնքան աւելի նորա ոտները խրւում են գետնի մէջ։

Մհերը ներկայանում է Ռուստամին և Սվեատոգորին համապատասխան մի հսկայ, որոնք սկզբնական ժամանակի, մանաւանդ Սվեատոգորը, երկրիս տարերական ույժը պատկերացնող հսկաներ են; ժամանակով աւելի առաջ, քան թէ մարդանման հսկաները։ Մհերի աւագ լինելը, մինչև անգամ Դաւթից, երևում է ոչ միայն նորա ուժից, այլ և հէնց նրանից, որ նա, ինչպէս լեռան դևերը—քաջքերը, բնութեան տարերական ույժերը, ապրում է այրերի մէջ, և ինչպէս բնութեան ույժերն անմահ են, այնպէս և Մհերը չէ մեռել։ Բայց որ գլխաւոր նշանն է նորա աւագութեան, այն է, որ, նախնական բիրտ ժամանակների արիւնածարաւ բնազդումներին հակառակ, մարդանման, այսինքն ժամանակով կրտսեր դիւցազները սիրով չեն արիւն թափում թշնամիների հետ ունեցած կռւի մէջ, ցաւում են մարդկանց համար և մինչև անգամ կարեկցում են իրանց երդւեալ թշնամիներին, ինչպէս մեր վէպի մէջ Դաւիթն է դուրս գալիս,— իսկ նախկին, աւելի հին շրջանի տիտանները, որ արդէն ապրել են իրանց դարը, այդպէս չեն. նրանք հոգում են միայն իրանց համար և լալիս են իրանց կործանւած զօրութիւնը և ձեռքից եկած ամեն մի չարիք հասցնում են ամենքին, թէ թշնամիներին և թէ ոչ թշնամիներին։ Այդպէս են վարւում մեր վէպի մէջ Մսրամելիքն և Մհերը։

Մհերի վէպի վերայ խօսելով, չի կարելի չը յիշել Պռօշ Թագաւորի

և Արտաւազդի լայնի վէպերը, որոնց հետ Մհերի վէպը նմանութիւն ունի։ Առհասարակ մեր ժողովրդական վէպերի մէջ լիշատակւում է, որ մէկ զօրաւոր մարդ պէտք է դուրս գայ, կամ ծնուի մի օր։ Պռօշի վէպի մէջ ասւած է—երբ որ Խազլուայ լճի ջուրը, որի մէջ ձգւած է Պռօշի Հաւլունի թուրը, ցամաքի, այդ թուրը բռնող մի զօրաւոր ձեռք պէտք է աշխարհ գայ, իսկ թէ այդ մարդը Հաւլունի թրով ինչ պիտի անէ,—այդ Աստուծու գիտնալիքն է (Համով-Հոտով, 76 եր.)։ Մհերի վէպն աւելի ևս նման է Արտաւազդի վէպին։ Մհերն իւր անհանգիստ և չար բնաւորութեամբ և անիծեալ դրութեամբ նման է հայրական անէծքի տակ ճնշւած Արտաւազդին, որ փակւած է Մասսայ լիի մէջ, ինչպէս Մհերը Վանայ քարի մէջ։ Երկուսի վէպի մէջ ևս դուրս է գալիս մեր հեթանոսական մի հաւատալիքը, որով մեռելների ուրվականները հանդերձեալ աշխարհից խօսում են. Արտաւազդի հայր Արտաշէս արքան թաղման ժամանակ գերեզմանի միջից անիծում է իւր որդուն և նորա ապագան գուշակում, իսկ Մհերն իւր ծնողների գերեզմանի վերայ լալիս է և խօսում ծնողների հետ, որոնք լալանում են նրան իւր ապագան։

Արտաւազդը Մհերի պէս փակւած է այրում մինչև աշխարհի վերջը, երբ որ պիտի դուրս գայ և կատարած դնի աշխարհին. բայց աշխարհը վերջ չ'ունի, և Արտաւազդը յաւիտեան փակւած է. իսկ Մհերը՝ «Մհեր, դու ՝ինչ տ'ելնես ըդ տեղէն»։ Նախնիների հարցմունքին պատասխանում է.— «Ցեր որ ցորեն եղաւ քընց ալուճ, ու գարին եղաւ քընց մասուր մի. հրամա՛ լէ հրամանք կայ, որ էլնանք իդա տեղէն»։ Ի՞նչ է Մհերի այս պատասխանը. ցորենը երբ կը լինի ալուճի չափ, իսկ գարին մասուրի չափ, որ նա դուրս գայ։ Ուրեմն նա յաւիտեան պիտի փակւած մնայ, չ'ելնի աշխարհ, որ նորա աշխարհը չէ, որովհետև նորա առաջ չէ կարողանում դիմանալ, որովհետև շատ մանրացած է, իսկ ինքը, Մհերը շատ խոշոր հսկայ է, որի ժամանակն անցել է։ Մհերի այս խօսքը մի դառն ծիծաղ չէ արդեօք երկրագործութեան վերայ, որով նա ուզում է ասել թէ որովհետև մարդիկ չնչին երկրագործութեամբ սկսեցին պարապել, իսկ ես, որ երկրագործութեան ժամանակի ծնունդ չեմ, քանի այդ երկրագործութիւնը կայ, աշխարհ չեմ ելնիլ։ Եւ իրաւ, Մհերը գործ ունի միշտ պարզամիտ հովիւների և վայրագ որսորդների հետ. նրան տեսել են միայն նախնիներն ու հորթի ետևից գնացող հարսը. Մհերը բռնի ուժի տիրապետութեան դարում է ծնւած, նա աշխարհքը զօրով, ուժով ուսել գիտէ միայն, և ոչ թէ խելքով. ինչպէս ուսում են երկրագործ մարդիկը, և խելքով աշխարհ ուսելը նորա համար անհասկանալի է, ինչպէս որ անհասկանալի էր խելքով իւր հսկայական ձիու հսկայական տոպրակը ձիու գլուխը տալը։—

ԺԸ.

Ազգային վէպից մնաց մեզ վիշել վէպի վերջաբանը. «Ամեն խամբարձման գիշեր Մհերի քարի տիւռ կը բացուի. մարդ չի տեսնէ, հրամանք չը կայ մարդ տեսնայ»—Ի՞նչ է այդ համբարձման գիշերը, նոյնպէս և «չուր Քրիստոս դալ դատաստան» խօսքերը, եթէ ոչ հեթանոսական գաղափարներ, որոնք յայտնւում են քրիստոնէական անուան տակ և ամենեին չեն յարմարւում Մհերի վէպին։ Քրիստոսի դատաստան դալու յաւիտենականութիւնը հ. Սրուանձտեանի վարիանտում արդէն ունի իւր հեթանոսական պատշաճաւոր ձևը, որ վերևում դրեցինք. իսկ համբարձման տօնը, արդէն յայտնի է, մեր խորին հեթանոսական տօներից մէկն է, քրիստոնէականի վերածւած։ Այդ տօնի հեթանոսական անունը յայտնի չէ, բայց մինչև այժմ կենդանի մնացած աւանդութիւններից և ծէսերից երևում է, որ դա բաղդի, բաշխքի, ճակատագրի, վիճակի, հրամանքի աստուածութիւնների տօնը պիտի լինէր հեթանոսութեան ժամանակ, ինչպէս և բոլոր բնութեան՝ բոյսերի և ջրերի տօնը, որ կոչւում է մինչև այժմ ծաղկամօր տօն, և ամենատարածւած տզգային տօներից մէկը պիտի լինէր, որ մինչև այժմ տարածւած և սիրելի է։ Համբարձման և վարդավառի տօները կապւած են իրար հետ. վիճակը շատ տեղ վարդավառին են բաց անում, մանաւանդ լեռնային տեղերում։ Եթէ համբարձման տօնին չի յաջողում աղջիկներին վիճակ բանալ, նրանք բանում են վարդավառին, որ դարձեալ հեթանոսական տօն է։ Այդ օրն այժմ ևս ամեն մարդ իւր վիճակն է բանում մեծ հանդէսներով և մեծ երգերով. ամեն մարդ իւր բաղդի համար մի բան է ձգում մի ամանի մէջ, որ կոչւում է «Հաւգիր», մի բառ, որ իւր կազմութեան մէջ ունի հաւահմայութեան արմատը։ Հաւգիրը, որ զարդարւած է լինում ծաղիկներով, աւելի հօրոտ ու մօրոտ ծաղիկներով, և միջին ունենում է եօթն աղբիւրից վերցրած ջուր, գիշերը դնում են բացօդեայ տեղում, աստղերի ներգործութեան ներքոյ, աստղերի, որոնք այնքան մեծ դեր են խաղում մեր ժողովրդի հաւատալիքների մէջ, և որոնք նոյն իսկ մեր վէպի մէջ երևում են՝ «Սասմայ և Մսրայ աստղերը», որոնցով Զէնով-Զովանը զուշակում է Դաւթի վատ դրութիւնը։ Համբարձման գիշերը մի որոշեալ ժամում ամբողջ բնութիւնը, և՝ ջուր, և՝ սար, և՝ ծառ, և՝ երկինք գետինք սկսում են շարժւել և իրար վերայ խոնարհւելով, իրար ողջոյն տալ, սարը՝ սարին, ծառը՝ ծառին, երկինքը՝ գետնքին։ Ահա այդ վայրկեանին է աստղերի ներգործութիւնն անցնում վիճակի Հաւգիրի վերայ. ահա այդ րոպէին բացւում է և Մհերի այրի դուռը, բայց «հրամանք չը կայ, որ եղնայ» նա այրից. նորա բաղդը, նորա ճակատագիրը մի անգամ արդէն որոշած է, որ նա յաւիտեան փակւած պիտի մնայ Տոսպան բլրի մէջ։

Ամփոփենք մեր գրութիւնը։ Աբամելիքի, Դաւթի և Մհերի «Ազգային վէպն» ներկայանում է իբրև կէս-պատմական և կէս-դիւցազնական հին վէպ, որի սկիզբը նախապատմական ժամանակներում է, իսկ վերջը միջին դարերում։ Նոր դարերի պատմական կեանքը գրեթէ ամենևին չէ երևում։ Անաքրոնիզմները, հարկաւ, անխուսափելի են։ Վէպի մէջ դուրս է գալիս հեթանոսական կրօնը, խառն քրիստոնէականի հետ. բայց եթէ լաւ նայենք, կը տեսնենք, որ այդ քրիստոնէական տարրը շատ անգամ անունով է միայն քրիստոնէական, և եթէ նոր վարիանտներ ձեռք բերուին, թերևս շատ քրիստոնէական բան հեթանոսական ձևով պատմուած լինին, քանի որ երկու վարիանտներն այդ կողմից մէկ մէկու լրացնում են։ Վէպը դիւցազներգութիւն է, հին դիւցազներգութիւն, որ, իւր իսկատիպ առանձնութիւններով հանդերձ, հարկաւ, նմանութիւն ունի ուրիշ ազգերի դիւցազներգութիւններին։

Այդ վէպը ժողովրդի համար մի սոսկ հէքիաթ չէ, որին ժողովուրդը չէ հաւատում թէ մի ժամանակ կատարուել է. դա՝ ժողովրդի համար մի պատմութիւն է, որին, չը նայելով որ շատ աւելի գերբնական հրաշալիքներով է լցած քան թէ հէքիաթները, ժողովուրդը հաւատ է ընծայում թէ մի ժամանակ կատարուած է իսկութեամբ։ Ժողովրդի հաւատքը շատ տեղ երևում է վէպի ընթացքից. ամեն մի գերբնական գործ կատարուում է «Աստուծու հրամանքիս», իսկ այդ աստուածը, որ հնումը հեթանոսական որ և է աստուած է եղել, ներկայումս քրիստոնէական ճշմարիտ Աստուածն է, ուրեմն կարող է և հրաշքներ գործել։ Դաւիթն ինչ որ ուզում է, Աստուած կատարում է, որովհետև, ժողովրդի բացատրութեամբ հէնց, «էն ժամանակ արդար մարդ ին, ինչ մրազ էնին՝ Աստուած կը կատարէր»։ Ժողովուրդը հաւատում է, որ մինչև այժմ էլ Մհերը Վանայ այրում փակուած է, և թէ ամեն համբարձման գիշեր այրի դուռը բացուում է. նա մինչև այժմ էլ ցոյց է տալիս Դաւթի ս. նշանը, «ու հմկայ լէ ըն սուրբ նշան՝ հանդ է ի գաւառ՝ Զօրկայ տուն». մինչև այժմ էլ ցոյց են տալիս Խանգութ տիկնոջ գլխի տեղը, երբ որ նա իրան բերդի գլխից վար ձգեց. «ուր գլուխ ծակեց ղբար. ու գլխու տեղ՝ Սասնու կէս չնիկ կորեկ կըլլեն լինք ու ծեծեն, սանդի տեղ։ Ուր եօթ ճիւղ ծամի տեղ լէ՝ հմկայ կ'երևայ ու մկայ լէ ըդ սանդ լանդ է բերդի առէջ»։ Ուրիշ ցուցմունքների վերայ, որ թողնում ենք, այս էլ ասենք, որ պատմող մոկացի Նահապետը (նորա հետ անշուշտ և իւր հայրենակիցները) կատարելապէս հաւատում էր իւր պատմած վէպին, իբրև ստուգապատում իրողութեան, և աւելացնում էր, լոգոց հանելով. «Այժմ էլ Սասայ քաղաք շատ կտրիճ փէհլուան կայ»։—